

**ՍՏԵՓԱՆ ԲՈՒՐՍԱԾԵՒԻ  
«ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ  
ԱԴՐԵԲԻԶԱՆԱԿԱՆ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՇԱԿԻ»  
ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ՝ ՂԱՐԱԲԱՂԻ ԽԱՆՈՒԹԵԱՆ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԿՁԲՆԱՂԲԻՒՐ**

**Ստեփան Բուրսաչեւի «Նկարագրութիւն Պարսկաստանում Ադրեբիջանական նահանգների եւ նրանց ժաղաքական կարգավիճակի» վերտառութեամբ աշխատութիւնը<sup>1</sup> Ղարաբաղի խանութեան ԺՀ. դարի երկրորդ կէսի պատմութեան կարեւոր սկզբաղերիւներից մէկն է եւ մեզանում առաւել քիչ ուսումնասիրուածներից է:**

**Հեղինակը, տուրք տալով պատմական յիշողութեանը, Ղարաբաղի խանութեան, ինչպէս աշխատութեան մէջ ընդգրկուած այրկովկասեան միւս տիրոյթների (Երեւանի, Նախիջեւանի, Գանձակի, Դերբենդի, Ղուբայի, Շաքիի, Շամախիի, Բաքուի խանութիւնները) նկատմամբ օգտագործում է «Ադրեբիջան» անուանումը. Խօսքը Սեֆեան պետութեան (ԺԶ.-ԺԼ.) չորս՝ Իրաք, Ֆարս, Ազարբայջան եւ Խորասան վարչաքաղաքական ու ֆինանսական համակարգում այս տարածքի Ազարբայջան միաւորի մասին է<sup>2</sup>: Վերջինս իր մէջ էր միաւորում Ասրապատականի (Կենտրոնը՝ Թաւրիզ), Ջուխուր-Սաադի (Կենտրոնը՝ Երեւան), Ղարաբաղի եւ Շիրվանի բէկլարբէկութիւնները<sup>3</sup>: Այս հանգամանքից ելնելով՝ Ստեփունաչեւն «ադրեբիջանական խաներ» է անուանում ոչ միայն**

1 БУРНАШЕВ, С., *Описание областей Адребиженских в Персии и их политического состояния*, Курск 1793.

2 *Tadzhkirat al-muluk: A Manual of Safavid Administration* (circa 1137/1725), Persian text in facsimile (B. M., Or. 9496), Translated and explained by MINORSKY, V., London 1943, 162.

3 Անդ, 164-168:

**Մարադայի, Թաւրիզի, Արդաբիլի կառավարիչներին, այլեւ Երեւանի, Շաքիի, Շիրվանի, Բաքուի, Նախիջեւանի, Գանձակի եւ Ղարաբաղի խաներին<sup>4</sup>, ինչպէս նաեւ Արեւելեան Վրաստանը:**

Մինչդեռ այս հանգամանքը խորհրդային պատմագիտութեան մէջ թիւր ըմբռումների եւ քաղաքական շահարկումների առիթ է դարձել: Մասնաւորապէս եղակացւում էր, որ արդէն այն ժամանակ, երբ Ստ. Բուռնաշեւը շարադրում էր իր աշխատանքը, ժամանակակիցները նկատում էին երկու Ադրբեջանների բնակիչների «Քննիկ լրնիկանորութիւնը», որը հնարաւոր է դարձնում նրանց երկու հատուածների (խօսքն այսպէս կոչուած Ադրբեջանի Հիւսիսային եւ Հարաւային հատուածների մասին է (Գ. Մ.) միաւորումը<sup>5</sup>: Սակայն խորհրդային պատմագիտութեան այս թէզի սխալականութեան մասին է խօսում նաեւ այն փաստը, որ Ստ. Բուռնաշեւի 1786 թուականին կազմած Պարսկաստանի գլխաւոր քարտէզում Ադրբեջանն ընդգրկուած էր Իրանական պետական սահմաններում, որպէս նրա վարչաքաղաքական անբաժան մաս<sup>6</sup>:

Հարկ է նշել նաեւ, որ պատմագրական երկի հեղինակը 1783-1787 Քարբլիի եւ Կախեթի միացեալ թագաւորութեան արքայ Հերակլ Բ.ի (1762-1798) եւ Իմերեթի թագաւորութեան Սողոմոն Ա.ի (1752-1784) արքունիքներում ոռուսական ռեզիդենտ էր Նշանակուած: Վերջինիս հիմնական գործառողթ՝ Ռուսական կայսրութեան ուազմաքաղաքական շահերի պահպանումն էր Այսրկովկասում: Վերջապէս, հանդիսանալով ոռուսական բարձրաստիճան զինուորական ու պետական գործիչ, Ստ. Բուռնաշեւը այսր-

4 БУРНАШЕВ, С., նշ. աշխ.:

5 ЛЕВИАТОВ, В., Очерки из истории Азербайджана в XVIII веке, Баку 1948, 144-145.

6 Генеральная карта Персии с показанием границ, главных ее разделений, больших дорог, всех владений в Адребижене, всех владельческих городов в Араке и некоторых других областях. Сочинена полковником и кавалером Бурнашевым в Тифлисе в 1786 году. Հմետ. ՄԽԻԹԱՐԵՎԱՆ, Գ., Ստ. Բուռնաշեւի «Նկարագրութիւն Պարսկաստանում Ադրբեջանական նահանգների...» երկը՝ Այսրկովկան Ժ.՝ դարի պատմութեամ ալրիւր, ի «Հայաստանը եւ Արևելաքարիստոնեական Քաղաքակրթութիւնը» Միջազգային գիտաժողովի Զեկուցումներ եւ զեկուցումների դրայք-թեր՝ Առէկրուած ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեամ ինստիտուտի Քիսուոննեայ Արեւելքի բաժին ստեղծման 40-ամեակին եւ գրա հիմնադիր, պրոֆեսոր Պարզյալ Մուրադեամի մահուամ 5-րդ տարելիցին (Երևան, 12-13 դեկտեմբերի), 2016, 178:

կովկասեան իշխանութիւնների քաղաքական կողմնորոշման հարցում չի լրջանցում նաեւ թուրքական գործօնը: Այսպէս, նրա աշխատանքը գրուել է Ժ. դ. երկրորդ կէսի երկու ռուս-թուրքական պատերազմների միջեւ ընկած ժամանակահատուածում, երբ թուրքական կողմը ստիպուած էր հաշտուել Քիւչուկ-Կայնարջիի (1774) պայմանագրի հետ: Աւելին, Գէորգիեւսկի դաշնագրով ռուսական ռազմաքաղաքական դիրքերն էլ աւելի են ամրապնդւում: Սակայն քաղաքական ամենամեծ հարուածը Օսմանեան կայսրութիւնը ստացաւ Ղրիմի խանութեան կորստով: Թուրքական պետութեան կովկասեան քաղաքականութեան կոռւանը մնում էին Դաղստանի նոյնադաւան ժողովուրդները (լեզգիներ, աւարներ եւ այլն) եւ այսրկովկասեան խանութիւնները: Աշխարհաքաղաքական այդ բարդ տարածաշրջանում օսմանցիները շեշտը գնում են վերը նշուածների վրայ՝ օգտագործելով կրօնական եւ դաւանական նոյնականութիւնը:

### ՂԱՐԱԲԱՂԻ ԽԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՒԱԿՈՐՈՒՄԸ

**Ստ.** Բուռնաշեւը յստակ նշում է Ղարաբաղի խանութեան սահմանները. «Շուշիի խանի տիրոյթը<sup>7</sup> հիւսիսից սահմանակից է Գանձակ (Գենցա) քաղաքի շրջանին եւ Կուր գետը բաժանում է այն նույիի խանութիւնից, հարաւ-արեւելիցից Արաքս գետը բաժանում է խանութեան տարածքը Մուղանչոլից [Մուղանի հարթավայրից] եւ Ղարադաղից, իսկ արեւմուտից՝ [սահմանակից է] նախիջեւանին»<sup>8</sup>:

**Ստ.** Բուռնաշեւը շարադրում է խանութեան ձեւաւորման պատմութիւնը. «Շուշին գիւղ է եղել եւ պատկանել է Ղարաբաղի Սղնախների հայկական հինգ մելիքներից Շահնազարին: Փանակը՝ Զեւանշիր գիւղի աւագի որդին, օգտուելով նադիր շահի մահից յետոյ [Իրանում] ստեղծուած խառնակ իրավիճակից, հաւաքում եւ տիրում է քափառականների, հզօրանում է Սղնախում, իրեն խան հռչակում»:

Շուշի բերդաքաղաքը կառուցուել էր 1754ին եւ 1780ական թուականներին քարէ ամուր պարիսապներով քաղաք էր, որ պաշտպանում էին տարբեր տրամաչափի մինչեւ 50 թնդանօթ<sup>9</sup>: Հստ ԺԹ. դարի առաջին քառորդի տուեալների՝ քաղաքը բաժա-

7 БУРНАШЕВ, С., Յշ. աշխ., 13:

8 Անդ, 3:

9 СПФ АРАН, ф. 99, оп. 2, № 13, л. 53.

նուած էր երեք թաղամասերի՝ թարբերիզլիի (թարբերեցոց), Ղազանչալիի (Ղազանչեցոց) եւ Ագլիսիի (Ագուլեցոց)<sup>10</sup>:

Աւանդութեան համաձայն՝ Ղարաբաղի խաները ծագում էին թիւրքական ջեւանչիր ցեղախմբի սարաջալու ցեղից<sup>11</sup>: Իբրև թէ նրա առաջնորդներից մէկը լքելով իր հայրենիքը հաստատում է Լոռիում, ապա ծառայութեան մտնում Գանձակի խաների մօտ: Այստեղից էլ անցնում է Ղարաբաղ միանում ջեւանչիր ցեղին եւ ամուսնանում: Նա մի որդի է ունենում Ալի անունով, որին գունատ դէմք ունենալու համար կոչում էին Սարիջէ (ղեղնաւուն): Վերջինիս գլխաւորած խմբաւորումը կոչում է Սարիջէ-ալիլու: Նրա ունեցուածքը ժառանգաբար անցնում է որդուն՝ իբրահիմ աղային, որի աւագ որդին՝ Փազլ Ալի բէկը գառնում է նադիր շահի իշիք-աղասիի գինուորներից մէկը: Երբ նա սպանում է ուազմի դաշտում, շահն իր մօտ ծառայութեան է կանչում իբրահիմի կրտսեր որդուն՝ Փանահ Ալիին<sup>12</sup>: Փանահ խանին յաջողում է փախչել շահի ծառայութիւնից եւ անցնել Ղարաբաղ, որտեղ թիւրքական ջեւանչիր, օթուղիքի, քեար-բիրլու, ինչպէս նաեւ Խորասանից Վրաստան վերադարձած այլ ցեղերի հետ աւազակային յարձակումներ է գործում: Նադիր շահի մահից յետոյ (1747) նա հնազանդութիւն է յայտնում Աղիլ շահին (1747-1748), նրանից խալաթ, սուր եւ խանութեան ուղամ ստանում<sup>13</sup>:

Շահնազարը Արցախի հինգ մելիքական աներից մէկի՝ Վարանդայի Մելիք-Շահնազարեանների տոհմից էր<sup>14</sup>: Հստ ժամանակի մէկ այլ սկզբաղբիւրի՝ նա յարգանք եւ վստահութիւն էր վայելում Ղարաբաղի խաների մօտ: Այսպէս, երբ Փանահ խանն վայելում Ղարաբաղի խաների մօտ: Այսպէս, երբ Փանահ խանն վայելում Ղարաբաղի խաների մօտ:

10 Описание Карабагской провинции, составленное в 1823 году, действительным статским советником Могилевским и полковником Ермоловым 2-м, Тифлис 1866, 8.

11 МИРЗА ДЖЕМАЛ ДЖЕВАНШИР КАРАБАГСКИЙ, История Карабага, Баку 1959, 67.

12 ՄԻՐԶԱ. ԻՒՍՈՒՖ ՆԵՐՍԵՍՈՎ, Ճշմարտացի պատմութիւն, Թարգմանութիւնը բնագրից, Անրածութիւնը եւ ծանօթագրութիւնները Ք. Կոստիկեանի, Երևան 2000, 46-47:

13 ՄԻՐԶԱ. ԻՒՍՈՒՖ ՆԵՐՆԵՍՈՎ, Եշ. աշխ., 47-48:

14 Նրանց տոհմածառի մասին տես'ս ՄԱՂԱԼԵՍԱՆ, Ա., Արցախի մելիքութիւնները եւ մելիքական տները XVII-XIX դդ., Եր. 2007, 158-198:

նէր, ապա դիմում է Շահնազարին։ Վերջինս քաղաքական հաշուարկներից ելնելով՝ իր դուստր Հուրզադ խանումին կնութեան է տալիս իբրահիմ խանին<sup>15</sup>։

ՂԱՐԱԲԱՂԻ ԻԲՐԱԶԻՄ ԽԱՆԸ՝

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ «ԻՆՔԻՇԽԱՆ» ԵՒ «ՀԶՕՐ» ՏԻՐԱԿԱԼՆԵՐԻՑ

**Ղարաբաղի խանի մասին Ստ. Բուռնաշեւը գրում է. «Նրա որդի Իբրահիմը (ներկայիս խանը), ամուսնանալով հայ մելիք Շահնազարի դստեր հետ, կառուցեց Շուշիում ամրոց, ուրիշ բնակավայրեր զաւթեց նախիջեւանում ու Ղարաբաղում եւ տիրեց Գանձակ (Գենջա) քաղաքին։ Նա համաճայնութեան եկաւ Հերակլ արքայի հետ, որ մասնակից դառնայ իր նախաձեռնութիւններին եւ չխանգարի իր յաջողութիւններին։ Այդպիսով, ամրացնելով իր իշխանութիւնը՝ իիմում է Շուշիի խանութիւնը Ղարաբաղի եւ նախիջեւանի հողերի վրայ<sup>16</sup>։»**

Իրօք, Գանձակի, Ղարաբաղի, Նախիջեւանի եւ Արդեքիլի խաները դեռեւս Փանակ խանի օրոք էին հնազանդում Ղարաբաղի տիրակալին։ Վերջինս կառավարիչներ եւ փոխանորդներ էր նշանակում այդ վայրերում ու պատանդներ պահում թառնակիւտ ամրոցում<sup>17</sup>։

Խօսելով Ղարաբաղի խանի քաղաքական ինքնիշխանութեան մասին Ստ. Բուռնաշեւը մատնանշում է տարածաշրջանում նրա գրաւած քաղաքական դիրքն ու կարգավիճակը։ Դրանով էր պայմանաւորուած իբրահիմ խանի նկատմամբ Ռուսական ու Օսմանեան կայսրութիւնների եւ իրանի տէրութեան դիրքորոշումը, ճշտելով, թէ նա որչափ կարող էր հաշուի նստել տուեալ իշխանութեան գոյութեան փաստի եւ նրա քաղաքական դերակատարման հետ։

Հեղինակն այսրկովկասեան «ինքնիշխան» տիրակալներին բաժանում է «հզօրների» եւ «նուազ հզօրների»՝ պայմանաւորուած այն հանգամանքով, թէ նրանք որքան մարտիկ կարող էին ռազմի դաշտ դուրս բերել եւ լեռնական ժողովուրդներից (բնագրում՝

15 ՄԻՐԶԱ. ԻԻՍՈՒՖ ՆԵՐՍԷՍՈՎ, Յշ. աշխ., 42:

16 Ղարաբաղի խանութեան ձեւաւորման մասին տե՛ս ՄԱԳԱԼՅԱՆ, Ա., *Арցахские меликства и возникновение карабахского ханства*, – «Русский сборник: Исследования по истории России», Ред. О. Эльдман, т. VIII, Москва 2010, 7-25:

17 ՄԻՐԶԱ. ԻԻՍՈՒՖ ՆԵՐՆԵՍՈՎ, Յշ. աշխ., 54:

*(ეყვენებულ)* ფალკაგაძ ქარადკანანხერი იძნოւმ მანებული ფრიმელი. Այդ առում უ Սო. Բიուნაշხეც დროւմ է, որ «իբրահիմ խաნը ինքնիշ խան է և Ադրեბრիջանում հօգոր, հայերի ենտ միասին ունի մինչեւ 7000 զինուոր: Իբրահիմ խանը ինչպես և իր հայրը աւագակային յար-ձակումներով մեծ յաջողութիւններ է ունենում ու հարստանում: Այն-պես որ անիբաժնաշուրթեան դեպքում կարող է մեծ քանակութեամբ լեզენերի վարձել»<sup>18</sup>:

### ՀԵՐԱԿԼ Բ. ԵՒ ԻԲՐԱՀԻՄ ԽԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԻՑ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

*Հեղինակը Նարաբաղի խանութեան քաղաքական պատմու-թեան արտաքին քաղաքականութեան վերլուծում է Ռուսական կայսրութեան շահերի լոյսի ներքոյ: Սո. Բիունաշხեც՝ պատմա-կան իրադարձութիւնների ականատեսն ու ակտիւ դերակատարը, համառօտ, յաճախ սուբյեկտիւ, քաղաքական վերլուծութիւններ է կատարում: Աշխատանքը շարադրելիս նա առաջնորդուել է այն սկզբունքով, թէ նկարագրուած խանութիւնն ինչպիսի քաղաքա-կան դիրքորոշում ունէր Քարթլիի եւ Կախեթի միացեալ թագա-ւորութեան նկատմամբ եւ առեւտրա-տնտեսական ինչ նշանակու-թիւն ունէր վերջինիս համար: Աւելին, Այսրկովկասում գտնուե-լու տարիներին Սո. Բիունաշხեც հաւաքել եւ գրչին էր յանձնել վրացական թագաւորութեան ներքին եւ արտաքին քաղաքակա-նութեանն առնչուող տեղեկութիւններ, որոնց ականատեսն էր ինքը: Այսպէս, նրա «Վրաստանի պատկերը կամ Քարթլիի եւ Կա-խեթի քագաւորութեան Քաղաքական նկարագրութիւնը» աշխատու-թիւնը նուիրուած է Վրաստանի եւ յարակից տիրակալների հետ յարաբերութիւններին, ներքաղաքական իրավիճակին<sup>19</sup>:*

*Ուստի՝ սուրբ քննադատութեան ենթարկելով Ղարաբաղի իբրահիմ խանի «հակավլացական» քաղաքականութիւնը, երբեմն էլ՝ անձնական որակաւորումներ տալիս: Սակայն դրանով հան-*

18 БУРНАШЕВ, С., 62. աշխ., 12-13:

19 БУРНАШЕВ, С., *Картина Грузии или описание политического состояния царств Карталинского и Кахетинского, сделанное, пребывающим при его высочестве царе Карталинском и Кахетинском Ираклии Темуразовиче полковником и кавалером Бурнашевым в Тифлисе, в 1786 г.*, [Изд. 1-е]. Курск, тип. Приказа общественного призрения, 1793, (նույն) [Изд. 2-е]. Предисл. и изд. К. Н. Бегичева, Тифлис 1896.

գերձ, հեղինակը չի խեղաթիւրում պատմական դէպքերն ու իրութիւնները:

**Ստ.** Բուռնաշեւն այդ համատեքստում է դիտարկում նաև իրացիմ խանի յարաբերութիւնները վրաց Հերակլ արքայի հետ. «Հերակլ արքայի հետ նա 26 տարի անընդմեջ քարեկամութիւն է ունեցել<sup>20</sup>: Վերջին երեք տարին թէեւ իրեն անհաւատարմութեան մէջ կասկածելու զանազան առիթներ է տուել [Իրրահիմ խանը], սակայն բացայսոյց չի տուել իր անքարեացակամութիւնը և ամէն կերպ հաւաստիացնում է արքային իր անկենդուրթեան մասին: Խոյը նախկին խան Ահմեդի գաղտնի գիխաւոր դաշնակիցն էր Վրաստանի հարակից մահմենդական ժողովուրդների հետ վերջինիս [Հերակլի] դէմ: Բայց ժամի որ Ահմեդ խանը սպանուած է, իսկ նրանց հրահրոյ տէրութիւնը չիրականացրեց իր խոստումները, ուստի եւ աւելի փափկեց, թէեւ պարսկիների ոչ միայն խոստումներին, այլեւ երդումներին, խարդաւանդին, Կատակել չի կարելի: [Հերակլ] արքայի նկատմամբ նրա [Իրրահիմ խանի] վերաբերմունքից կարելի է եզրակացնել նաև Ռուսաստանի հանդէպ նրա տրամադրուածութեան մասին»<sup>21</sup>:

ՂԱՐՍԲԱՂԻ ԻԲՐԱՀԻՄ ԽԱՆ ԵՒ ՂՈՒԲԱՅԻ ՖԱԹՀ ԱԼԻ ԽԱՆ  
ՊԱՅՔԱՐ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒԻՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ  
ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այսրկովկասում քաղաքական գերիշխանութեան հասնելու համար 1780-ական թուականներին հակամարտող երկու խմբաւորումներ էին առաջացել, որոնցից մէկը ղեկավարում էր Հերակլ Բ. արքան (նրան դաշնակցում էր Ղարաբաղի իրացիմ խանը), միւսը՝ Ղուբայի Ֆաթհ Ալի խանը: Ղուբայի խանն անհանգստացած էր Այսրկովկասում Հերակլ Բ.ի եւ Ղարաբաղի խանի քաղաքական դերի մեծացմամբ: Տարածաշրջանում ուազմաքաղաքական միանձնեայ գերիշխանութեան համար Ֆաթհ Ալի խանին անհրաժեշտ էր հնազանդեցնել Ղարաբաղի խանութիւնը: Այս մասին Ստ. Բուռնաշեւը հետեւեալն է գրում: «Իրրահիմ խանը անհաշտ քշնամութիւն ունի Դերբենդի Ֆաթհ Ալի խանի հետ, որը

20 Ղարաբաղի Փանահ խանը մահացել է 1760-ական թթ. սկզբին, իսկ Իրաստիմ խանը տարեգրի փոխանցմամբ իշխանութեան էր եկել 1762 թ. (հմտ. Միրզա Խասուֆ Ներսէսով, 63):

21 ԵՍՐԱՌԱՋԵՎ, Ը., Ձշ. աշխ., 14-15:

թէեւ իր դաշնակիցների հետ... մշտապէս ճգուռմ է նրա դէմ պատերազմնել, սակայն նա [Ղարաբաղի խանը], յայր դնելով իր աշխարհագրական ամուր դիրքի եւ Շուշի ամրոցի անառիկուրեան վրայ՝ իրեն վտանգուած չի օգում ձևուան ամիսներին, իսկ ամուանը Ղարաբաղում սաստիկ շոգերին լեռնական ժողովուրդներն ի վիճակի չեն դիմանալ»<sup>22</sup>:

**Իրոք, Ֆաթհ Ալի խանը Թարքիի շամխալի եւ Շամախիի խաների հետ միասին 1780-1781 թուականներին երկու անյաջող արշաւանք է կատարում դէպի Ղարաբաղի խանութիւն։ Հարցը «խաղաղ ճանապարհով» լուծելու համար նա Ղարաբաղ է ուղարկում իր փեսային՝ Բաքուի խանին։ Սակայն իբրահիմ խանը ձերբակալում է նրան եւ երկու տարի պատանդ պահում։**

Յաջողութեան համար կողմերին պէտք էր ստանալ Ռուսական կայրութեան աջակցութիւնը։ Դրանով պայմանաւորուած՝ նրանք միմեանց սեւացնելու քաղաքականութիւն էին սկսել։ Այսպէս, Ղուբայի խանը ոռուսական իշխանութիւններին գրում էր, թէ տեղի խաների համար անընդունելի է, որ «Վրացին» (իմա՝ Հերակլ Բ. արքան) եւ իբրահիմ խանը տիրանան «սադարքայշանական բոլոր քաղաքներին»<sup>23</sup>։ Իր հերթին Հերակլ Բ. արքան 1782 թ. Պ. Պոտեօմկինին ուղղուած նամակում Ֆաթհ Ալի խանին անհաւատ եւ կեղծաւոր էր անուանում, ապա մեղաղորում էր թուրքերի հետ նամակագրական կապ հաստատելու համար<sup>24</sup>։

**Սակայն Ֆաթհ Ալի խանը պատրաստ էր հրաժարուել վրաց թագաւորի հետ ունեցած թշնամանքից, եթէ վերջինս օգնութիւն չտրամադրէր իբրահիմ խանին<sup>25</sup>։ Իր հերթին Հերակլ Բ-ն գրում էր, որ ինքն իբրահիմ խանի հետ դաշինք ունի՝ անհրաժեշտութեան դէպքում վերջինիս ռազմական օգնութիւն տրամադրելու մասին։ Հեռատես արքան՝ Ֆաթհ Ալի խանի հետ յարաբերութիւնները սրել չցանկանալով, ուուսական կողմին խընդրում է միջամտել վէճին եւ յետ պահել Ղուբայի խանին Ղարա-**

22 Անդ, 13:

23 Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии, Под ред. А. А. Цагарели, СПб., т. II, вып. II, 1902, 21.

24 Межкавказские политические и торговые связи Восточной Грузии (конец 60-х – начало 90-х годов XVIII в.), 56.

25 Русско-дагестанские отношения в XVIII – начале XIX в. Сборник документов, Отв. ред. В. Гаджиев, Москва 1988, 175.

բաղ արշաւելուց: Հստ Հերակլ Բ.-ի, ռուսական գահի համար առաւել օգտակար կարող էր լինել Ղարաբաղի խանը, քան Ֆաթհ Ալին, որի հնազանդութիւնը վախի վրայ էր հիմնուած<sup>26</sup>:

ՂԱՐԱԲԱՂԻ ԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՏՐՈՒԹԵԱՆ  
ՌԱԶՄԱՔԱՐԱՔԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՀՈԼՈՎՈՅԹՈՒՄ

Ռուսական կայսրութեան համար Ղարաբաղի խանութիւնը մեծ ռազմաքաղաքական եւ առեւտրա-տնտեսական կարեւորութիւն ունէր: Այն դարպաս էր համարլում՝ ուղի դէպի իրան, որն Արեւելեան Վրաստանն աշխարհագրորէն մօտեցնում էր Բաքուին, իսկ Կուր-Արաքս գետկիցի մօտ գտնուող Ջաւադ բնակավայրը ղարաբաղեան տարածքներին միացնելու պարագայում՝ Աստրախանից Ջաւադ եւ Սալիխան «ոչինչ չարթեցող» ապրանքները հնարաւոր կը լինէր փոխանակել մետաքսի եւ այլ ապրանքների հետ<sup>27</sup>:

Ուստի՝ այս հանգամանքը ստիպում էր Ռուսական կայսրութեանը հաշուի նստել Ղարաբաղի խանութեան հետ, իսկ 1780ական թուականների կէսերին իբրահիմ խանի օսմանամէտ քաղաքականութեանը որպէս հակալչիո օգտագործել Հայկական պետականութեան վերականգման գաղափարը: Այսպէս, իրանի տէրութեան մեծ մասի կառավարիչ Ալի Մուրադ խան Զէնդի (1779-1785) գերագոյն խնդիրն էր ամրապնդել իշխանութիւնը երկրի ներսում: Դրա իրագործումը հնարաւոր էր միայն հզօր դաշնակցի առկայութեան դէպում եւ որպէս այդպիսին նա ընտրում է Ռուսական կայսրութեանը՝ հաշուի առնելով տարածաշրջանում վերջինիս տնտեսական ու ռազմաքաղաքական շահերը: Ռուսական կառավարող շրջանակները պատրաստ էին Ալի Մուրադ խանին որպէս իրանի տէրութեան շահ ճանաչել՝ այսր կովկասեան որոշ շրջաններից հրաժարուելու եւ դրանք ռուսական հովանու ներքոյ փոխանցելու պայմանով<sup>28</sup>: Ուստի, ռուսական դիւանագիտութիւնը Այրկովկասի քաղաքական քարտէզը

26 Межкавказские политические и торговые связи Восточной Грузии, 65.

27 АКАК, т. II, 1868, 703.

28 ԶՊԲԱՆԵԱՆ, Պ., Հայ-ռուս-պարսկական կապերի պատմութիւնից (XVIII դարի վերջ), – ՊԲՀ, 1991, № 2, 59: Հմբ. J. PERRY, The Zand Dynasty, – The Cambridge history of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, Cambridge 1991, vol. VII, 96.

վերաձեւելու տարբերակ է մշակում: Նախատեսում է ստեղծել հայկական թագաւորութիւն, որն իր մէջ տարածքներ էր միաւորելու նաեւ Օսմանեան կայսրութիւնից, իսկ Դերբենդից մինչեւ Գիլան ընկած տարածքների վրայ ստեղծուելու էր այսպէս կոչուած, Աղուանք (Ալբանիա) անուանումով պետութիւնը: Արեւմտավրացական իշխանութիւններն ու իմերեթն անցնելու էին Ռուսաստանի հովանաւորութեան տակ, իսկ Ախալցխայի վրանն ու Գանձակի խանութիւնը՝ Արեւելեան Վրաստանին<sup>29</sup>:

Դեռևս 1783ի Ապրիլի նին Գ. Պոտեռմկինը Պ. Պոտեռմկինին սուած Հրամանագրում նշում էր, որ իբրահիմ խանին տապալելուց յետոյ Ղարաբաղը հայկական մարզի մաս էր կազմելու<sup>30</sup>: Հետեւաբար, Ղարաբաղի խանի ռուսամէտ կողմնորոշումն անկեղծ չէր, քանի որ Հայոց պետականութեան վերականգնումը վտանգում էր խանութեան գոյութիւնը:

### ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԾՆՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՌՈՒՍԿԱԿԱՆ ԿԱՅՄՐՈՒԹԵԱՆ ԱՅՄՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽԱՅԾ.

Ռուսական բարձրաստիճան պաշտօնեաների 1780ականների առաջին կէսի գրագրութեան քննութիւնը փաստում է, որ Հայոց պետականութեան վերածնման Հարցը նպատակ ունէր ռուսական ազգեցութեան տակ պահել վրաց թագաւորին եւ Ղարաբաղի խանին: «Նատ պարզ էր այս բոլորից, որ Եկատերինան Հայոց հարցն այնքան եռանդուն կերպով առաջ էր բաշել սոսկ իր շահերի համար, այն է՝ Ղարաբաղի խանութեան վրայ իր բաղաքական տիրապետութիւնը տարածելու համար» – գրում է Լէօն<sup>31</sup>:

Այսպիսով, Աղուանից թագաւորութեան հիմնումը նպատակ ունէր Կուրի աջափնեակում ապահովելու ռուսական գերիշխանութեան հաստատման օրինականութիւնը (լեզիտիմութիւնը)<sup>32</sup>: Թէեւ նախագիծը չիրականացաւ Ալի Մուրադ խանի վերահաս

29 ИОАННИСЯН, А., *Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия*, Ер. 1990, 136-139:

30 *Армяно-русские отношения в XVIII веке. 1760-1800 гг.* Сборник документов, Под ред. М. Нерсисяна, Ер. 1990, т. IV, 239.

31 Լեօ, Հայոց պատմութիւն, ի Երկերի ժողովածու, հ. Գ., Գիրք Դ., Եր. 1973, 346:

32 ТУНЯН, В., *Историческое пристрастие Азербайджана к истории Армении: мифы и реалии*, Ер. 2013, 157.

մահուան պատճառով (1785)<sup>33</sup>, այնուամենայնիւ, կասպից ծովի արեւմտեան ափերը մուսուլմանական խաների գերիշսանութեան ներքոյ միաւորելու գաղաքարը ոուսական այսրկովկասեան քաղաքականութեան համար կրկին կենսունակ է դառնում 1790-ական թթ. երկրորդ կէսին:

Այս «գործարքի» պատճառիտական գնահատականը տրուել է հայագէտ, կովկասագէտ Պ. Զօբանեանի կողմից, ով ձախողման պատճառները տեսնում է ոչ միայն Ալի Մուրադ խանի մահուան, այլեւ խանի երկդիմի քաղաքականութեան մէջ՝ որպէս Ռուսաստանի նկատմամբ զուտ դիւանագիտական խայծի<sup>34</sup>:

ՂԱՐԱԲԱՂԻ ԽԱՆՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ (ԽՄԱ' ՀԱՅԵՐԸ)  
ՍՏ. ԲՈՒՌՆԱՇԵԽԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԻՒՄ.

Քնութեան ենթակայ այս սկզբնաղբիւրը որոշ տեղեկութիւններ է հաղորդում նաեւ Ղարաբաղի խանութեան էթնիկ պատկերի մասին Ստ. Բուռնաշեւը գրում է. «Նուշիի խանի իշխանութեան տարածքում հաշուըւում է 7000 տուն քրիստոնեայ»: Խանութեան էթնիկ նկարագրին անդրադարձ կատարելիս հեղենակը շնչար դնում է «քրիստոնեաների» վրայ՝ որպէս Ավսրկովկասում Ռուսական կայսրութեան համար քաղաքական յուսալի յենարանի: Ուստի քրիստոնեանների (իմա' հայերի) մասին տեղեկութիւնները պայմանաւորուած էին Ռուսական պետութեան համար տարածաշրջանում յուսալի էթնիկ տարրի կարեւորութեամբ:

Ամփոփելով կարող ենք նշել, որ Ստ. Բուռնաշեւի աշխատութիւնն էականորէն տարբերուում է ժամանակաշրջանի ճանապարհորդների, գիտական արշաւախմբերի, առեւտրական գործակալների կատարած գրառումներից եւ գերծ է գրական գեղումներից: Ուշագրաւ է նաեւ այն փաստը, որ գտնուելով Թիֆլիսում՝ Ստ. Բուռնաշեւը կարողացել է մեծ ճշգրտութեամբ հաղորդել Ղարաբաղի խանութեան քաղաքական պատմութիւնը, ինչպէս նաեւ խոշոր պետութիւնների նկատմամբ նրա քաղաքական դիրքորոշումներին վերաբերող մանրամասներ:

33 Ալի Մուրադ խանի մահուան հետևանքով իրանում կրկին գահակալական կան կոիւներ են սկսում: Շուտով նրա եղրօրը Զաֆար խան Զենդին, յաջողուում է յադրող դուրս գալ պայքարից (1785-1789):

34 ԶՈՒԱՆԵԱՆ, Պ., նշ. աշխ., 438:

**Ուստի, հեղինակին յաջողուել է համառօտ երկի ըրջանակ-ներում գրեթէ ամբողջութեամբ ներկայացնել Ղարաբաղի խա-նութեան քաղաքական պատմութեան խճանկարը։ Ղարաբաղի խանի եւ հարեւան տիրակալների միջեւ առկայ քաղաքական յա-րաբերութիւնների վերաբերեալ Ստ. Բուռնաշեւի փոխանցած տեղեկութիւնների վերլուծութիւնից պարզ է դառնում, որ նա տարածաշրջանի ուժեղ խաներից մէկն էր։**

**Միւս կողմից, Ստ. Բուռնաշեւի աշխատութիւնն արտայա-տում էր Ռուսական կայսրութեան այսրկովկասեան քաղաքակա-նութիւնը եւ ռազմաքաղաքական շահերը տարածաշրջանում։**

**ԳՈՀԱՐ ՄԽԻԹԱՐԵՆ**

### **Summary**

## **ST. BURNASHEV'S COMPOSITION “THE DESCRIPTION OF THE ADMINISTRATIVE DIVISIONS OF AZERBAIJAN AND THEIR POLITICAL STATUS IN THE PERSIAN EMPIRE” AS THE HISTORICAL SOURCE OF THE KARABAKH KHANATE.**

**GOHAR MKHITARYAN**

St. Burnashev's historical composition “The description of the administrative divisions of Azerbaijan and their political status in the Persian Empire” is an important historical background of the Karabakh khanate in the second half of the 18th century and considered to be less researched topic.

Speaking about the political sovereignty of the Karabakh khanate, St. Burnashev indicates its political position and role in the region. The author analyzes the foreign policy of Karabakh's Ibrahim Khan based on the military-political interests of the Russian Empire in Transcaucasia. On the other hand, he emphasizes the relations among the khan of Karabakh and the influential rulers of the Caucasus region Herakl II of Georgia, and Fath-Ali Shah of Kubbeh and Derbent.

Giving the political description of the Karabakh khanate, St. Burnashev pays great attention to the Armenian population as the potential political base for the empire in the future.